պետաց եւ այլոց անձանց, իւրաքանչիւր ումեք ի նոցանէ՝ թողլով նմա աղատաբար վարել զնորընկալ պաշտօն իւր. չարգելուլ իւիք նմա, այլ յարգելով եւ օգնելով պահպանել զկողմն նորա։ Եւ զի որովհետեւ հաստատեցի զայս հրովարտակ դրոշմամբ կնքոյ իմոյ՝ այնր աղագաւ հաւատալ սմա։ Տուաւ ի Ջամադիալ ամսոջ, յամի 1036». կ՚աւելցնէ Շահխաթունեան թէ «յետկոյս հրովարտակին եղեալ զկնիք չորեքին անձինք խորհրդականք՝ վկայեալ են ստուգութեան այնր»։ Հիճրէի 1036, Ջումադա Ա. կը համապատասխանէ փրկչական 1627, Յունուար 18—Փետր. 16ին։

Հետաքրքրական է լսել նոյնին բովանդակութիւնը, ինչպէս յառաջ կը բերէ Գրիգոր Դարանաղցի (էջ 294—295), առանց տարակուսի գրի առնուած բերանացի աւանդութենէ. «Ես Շահ Ապազս ետու զիր հրամանաց Մուսայ խալիֆին, որ երթայ նստի իմով հրամանաւն յՈւչքիլիսայն։ Եթէ անդ ով ոք իցեն, ի մեծաց կամ ի փոքունց, մի իշխիցեն հրամանաց դորա կալ հակառակ կամ տալ պատասխանի. այլ զինչ եւ կամեսցի՝ արասցէ ըստ կրօնից օրինաց իւրեանց, եւ որքան կարասցէ՝ զխախտեալ եկեղեցիսն վերստին նորոգեսցէ եւ նոր եկեղեցի այլ հիմնարկեսցէ եւ չինեսցէ՝ որքան կարասցէ, եւ մի՛ յազգաց մերոց կամ ի պարսկականացն հակառակ